

Նարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

ՄԻՋՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածը նվիրված է համեմատաբար երիտասարդ գիտության՝ միջմշակութային հաղորդակցության տեսության համառոտ պատմությանը: Այն առանձնացնում է միջմշակութային հաղորդակցության խնդիրներին նվիրված աշխատամքները, ներկայացնում այս ոլորտի հետազոտությունների հիմնական ուղղությունները, լեզվական դետերմինանիզմի և հարաբերականության սկզբունքները, ամերիկյան հաղորդակցարանության շրջանակներում մշակույթի ուսումնասիրության հիմնական մակարդակները և այլն: Հոդվածում ներկայացվում են՝ միջմշակութային հաղորդակցության այնպիսի նոր ոլորտներ, ինչպիսիք են՝ մշակութային իմպերիալիզմ, մշակույթի գորապացում, մելիա-էկոլոգիա:

**Բանափի բառեր.** միջմշակութային հաղորդակցության, մոնոմշակութային, կրոսմշակութային, մշակույթների երկխոսություն, բազմամշակութականություն, մելիա-էկոլոգիա, լեզվամշակութարանություն

Միջմշակութային հաղորդակցության (ՄՀ) տեսությունը հետազոտությունների հարաբերականորեն նոր ոլորտ է, թեև միջմշակութային շփումներն ինքնին անհիշելի ժամանակների ծնններ են: ՄՀ-ի պիններներ են համարվում Ալեքսանդր Մակեդոնացին, Չինգիզ Խանը, Հուլիոս Կեսարը, Մարկո Պոլոն, Քրիստոնությունը Կոլումբոսը և այլք, ընդ որում, ինչպես հայտնի է պատմությունից, միջմշակութային տարրերությունների հաղթահարման համար հաճախ գործադրվել են բոնի միջոցներ:

Մշակույթների փոխազդակցության ու փոխազդեցության հիմնախնդիրները, մշակույթի ու լեզվի հարաբերակցությունը, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցման օպտիմալ ձևերի փնտրությունը միշտ եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Շատ ավելի վաղ, քան ՄՀ-ն կանաչութեալ որպես գիտելիքի առանձին բնագավառ, բազմաթիվ գիտնականներ, ինչպես Արխստոտելը, Լայրնիցը, Վոլտերը, Հերդերը, Կանտը, Հեգելը, Հումբոլտը, Շախտցերը, Ֆուլտոնը, Բոնար և ուրիշներ, շատ հարցերի վերաբերյալ արդեն տեսակետներ էին արտահայտել, որոնք էլ արդյունքում դարձան ՄՀ-ի հիմքը: Ստորև մենք կդիտարկենք այն հեղինակների դիրքորոշումները, ովքեր, մեր կարծիքով, առավել զգալի ներդրում են կատարել ՄՀ-ի տեսության մեջ, և ում եզրակացությունները առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում դրա հետագա զարգացման համար:

Հաղորդակցության բնագավառի ժամանակակից յուրաքանչյուր մասնագետի «մշակութային գրագիտության» անբաժանելի մասն են Վիլհելմ Ֆոն Հումբոլտի հայացքները, որոնք խթանեցին լեզվագիտության ու լեզվամշակութաբանության բազմաթիվ ուղղությունների զարգացումը: Ժողովրդի ոգու՝

որպես մշակույթի մասին հրովարտակի Հումբոլդտի գաղափարը բազմաթիվ տարասեռ մեկնաբանությունների առիթ տվեց համաշխարհային գիտության մեջ: Հումբոլդտի աշխատություններում մենք գտնում ենք այն գաղափարներ ակունքները, որոնք հետագայում ուսումնասիրեցին ու գարգացրին այլ հեղինակներ.

- լեզվի ու մտածողության փոխազդեցության մասին. «Լեզուների բազմազնության շնորհիվ մենք բացահայտում ենք աշխարհի գեղեցկությունը և այն բանի բազմազանությունը, ինչը կարողանում ենք ճանաչել. մարդկային կեցությունը մեզ համար դառնում է ավելի լայնահուն, քանզի լեզուները հստակորեն ու գործուն կերպով մեզ օժտում են մտածողության ու ընկալման տարրեր միջոցներով» /Գյոմբոլյան, 1985: 349/,

- աշխարհներակալման տարրերությունների մասին, որոնք հատուկ են տարրեր լեզվական հանրույթների ներկայացուցիչներին. «Տարրեր լեզուները քնավ ել միևնույն իրի տարրեր անվանումները չեն, այլ դրա տարրեր պատկերացումները. եթե այդ իրը արտաքին աշխարհի առարկա չէ, ապա [խոսող] յուրաքանչյուրը յուրովի է ստեղծում այն՝ դրա մեջ գտնելով իրենը միշտ այնքան, որքան հարկավոր է օտար միտքը ներքուստ ընդունելու ու անփոփելու համար» /նույն տեղում/,

- տեղեկատվության գոտման մասին, որը ստացվում է տարրեր լեզուների ներկայացուցիչների կողմից շրջապատող իրականության և լեզվական միավորների ներքին ձևի ակունքների ընկալման գործընթացում. «Անորոշ ու անձև մտածողության զանգվածից բառը պոկում է հայտնի բանակով նշաններ, միավորում դրանք, հնչյունների ընտրության օգնությամբ շաղկապում դրանք ազգակից այլ բառերի հետ, իսկ պատահական կողմնակի հանգամանքների շնորհիվ՝ կերպար ու երանգավորում ձեռք բերում, և դրանով իսկ անհատականանում» /նույն տեղում: 364/,

- լեզուների ազգային-մշակութային յուրահատկությունների մասին. «Ոգին, որով մենք նվաճում ենք, համեմատում, կարգավորում, դիտարկում, օտար միջավայրում նվազեցնում է լեզվի ամբողջ ներքին ստեղծագործական ունակությունը՝ որպես նրան շրջապատող ինչ-որ խորք բան» /նույն տեղում: 365/,

- ազգային բնավորության կերտման հարցում լեզվի դերի մասին. «Հենց դրանք են [լեզուները] առաջնահերթորեն որոշում ազգային բնութագիրը» /նույն տեղում: 363/,

- լեզվում անհատականի ու հավաքականի հարաբերակցության մասին. «Մենք միշտ լեզվի մեջ գտնում ենք իրավես լեզվական բնույթի համաձուլվածք այն բանի հետ, ինչը լեզուն ներառել է ազգի բնութագրից. «Միայն այն դեպքում, եթե գիտական քննությունը, անկախ լեզվից, կմիավորի ժողովրդի բնութագիրը իր բոլոր դրսնորումներով՝ անհատականության սուրյեկտիվ բնույթը, որը կախված չէ մտքի ու գործի զանազան եղանակներից և այն բնույթը, որով օժտված են կամ կարող են օժտված լինել լեզուները, միայն այդ ժամանակ մենք կվարողանանք ներթափանցել այն բազմազանության ու

միասնության մեջ, որտեղ ամփոփվում է հոգևոր ձգտումների անվերջ ու անհատնելի ամբողջությունը» /Գյումբոլյան, 1985: 373/.

- լեզվի, սոցիոսի ու անհատի սերտ փոխկապվածության մասին. «Յուրաքանչյուր տարիք, յուրաքանչյուր խավ, յուրաքանչյուր հայտնի գրող ու, եթե նկատի ունենանք ամենանուր հանգամանքները, նույնիսկ հոգեպես զարգացած ցանկացած մարդ ձևավորվում է իր ազգի արգանդում և, օգտվելով իր հարազատ հասկանալի լեզվից, վերջինիս բառերի հետ շաղկապում է անհատականացված ու երևակայական հասկացություններ, և դրանով իսկ բոլորի կողմից գործածական լեզուն քիչ-քիչ միախառնվում է անհատի մտածողության ու ընկալման նրբագույն ելեզների նվիրական շրջանակին» /նույն տեղում: 363/.

- մշակութավեզվական կողերի տարրերությունների մասին. «Լեզուները իիերոգիֆներ են, որոնց մեջ մարդն ամփոփում է աշխարհն ու իր երևակայությունը» /նույն տեղում: 349 այլն/:

Հումքողտի գաղափարները հետազայում զարգացրին Ռ.Ռ.ասկը, Յա.Գրիմը, Գ.Ծուեյնտալը, Ա.Ա.Պոտերնյան, Ի.Ա.Քորուեն դը Կուրտենեն, Վ.Վունդտը, Շ.Բալին, Ա.Մարտին, Լ.Վեյսիերբերը, Ժ.Վանդրիեսը, Ռ.Յակոբը սունը և այլք: Մշակույթների փոխգործակցությանն առնչվող գաղափարների զարգացմանը իրենց նպաստը բերեցին Զ.Ֆրոյդի (հոգեվերլուծության տեսություն), Զ.Դարվինի (ոչ վերբալ հաղորդակցություն), Ֆ.Սամների (եթոնկենտրոնություն) և այլոց աշխատությունները:

Ամերիկացի լեզվարան ու մարդարան Էդվարդ Սեպիրը և նրա սան Բենջամին Լի Ուորֆը մշակեցին լեզվաբանական հարաբերականության վարկածը, որը հզոր խթան դարձավ լեզվի ու մշակույթի փոխկապվածությանը նվիրված հետազա տեսությունների զարգացման համար: Սեպիր-Ուորֆի վարկածը հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1) լեզվաբանական դետերմինիզմ. գաղափար այն մասին, որ լեզվի քերականական ու իմաստաբանական կատեգորիաները ձևավորում են գաղափարներ ու որոշում մտածողության բնույթը

2) լեզվաբանական ռելյատիվիզմ (լեզվաբանական հարաբերականություն). յուրաքանչյուր մասնավոր լեզվում առկա են առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մյուսներից: Սեպիր-Ուորֆի տեսության «ուժեղ» կողմը, որի համաձայն լեզուն գերիշխում է մարդկանց մտածողության, գործողության ու աշխարհընկալման նկատմամբ, ներկայումս մերժում են լեզվաբաններից ու մարդարաններից շատերը: Օրինակ՝ այն քննադատել են Բ. Ա. Սերեբրեննիկովը, Դ.Դողդը, Գ.Վ. Կոլշանսկին, Ռ.Մ. Ուայքը, Ռ.Մ. Ֆրումկիննան, Է.Հոլենշտեյնը և ուրիշներ (այս մասին բանավեճը մանրամասնորեն տես Վ. Ա. Մասլովայի գրքում /Մասլովա, 1997: 36/): Սակայն նրա «քույլ կողմը», որը բանաձևում է լեզվի ու մշակույթի միջև առկա երկկողմանի սերտ կապը և օժտված է որոշ չափով ձևափոխված ըմբռնողական ապարատով՝ հիմնված մարդարանության վրա և հարստացած լեզվաբանական ու հոգեբանական ոլորտների հետազոտություններով, շարունակում է լուրջ

ազդեցություն գործել ԱՀ-ի տեսության զարգացման վրա և հնարավորություն է ընձեռում նորովի քննելու նրա զադանիքները /տե՛ս, օր. Seelye, 1993:/

Թեպետ բազմաթիվ հետազոտողներ իրենց պարտքն են համարում քննադատել Սեպիր-Ուորֆի տեսությունը, այն դարձավ լեզվաբանական մի ամբողջ ուղղության զարգացման հզոր խթան: Վ.Ն. Թելիխայի գրքում /Տելիք, 1996: 229/ վերլուծության են ենթարկվում լեզվաբանական հարաբերականության վարկածի զանազան տարրերակները, որոնց առնչություն են.

- «լեզվաբանական լրացման» վարկածը, որի հիմնական դրույթի համաձայն աշխարհի լեզվական պատկերն ամբողջացնում են իրականության մասին օբյեկտիվ գիտելիքները,

- «գործառնական լրացման» վարկածը, որի պնդմամբ լեզվաբանական հարաբերականության մասին հիմնական դրույթներն արդարացի են, սակայն դրանք հաշվի չեն առնում սոցիալական գործոնների ազդեցությունը լեզվի ու դրա գործածության վրա),

- «գոյաբանական հարաբերականության» վարկածը, որի համաձայն յուրաքանչյուր լեզու իրենից ներկայացնում է աշխարհի մասին որոշակի գիտելիքի տեսություն՝ իրեն ներհատուկ գոյաբանությամբ, ուստի և աշխարհի տարրեր ծագերում տարրեր լեզվակիրները չեն կարողանում համարժեքորեն փոխգործակցել /նույն տեղում/:

Սիջմշակութային հաղորդակցության տեսության մեջ էական ներդրում կատարեցին նաև Ժ.Պիամեի կողմին տիպիվ (ճանաչողական) զարգացման տեսությունը, որի տեսանկյունից մտավոր զարգացման առաջնային գործոնները սոցիալացման գործընթացներն են և Ուիսլիհին կողմին տիպիվ (ճանաչողական) ոճի տեսությունը: Մեծ արձագանք ունեցան մարդաբան Մ. Սիլի աշխատությունները: Նրա առաջին գիրքը՝ *“Coming of Age in Samoa”* (1928), հեղաշրջում կատարեց մարդաբանության մեջ նրանում շեշտվում էր սոցիալական միջավայրի, այլ ոչ թե կենսաբանական գործոնների գերակա դերը մարդու վարքի ձևավորման մեջ: Ավելի ուշ շրջանի աշխատություններում, օրինակ՝ *“Male and Female”* (1949), նկարագրվում են տարրեր մշակույթներում տղամարդու ու կնոջ վարքի միջև առկա տարրերությունները, և կասկածի է ենթարկվում նրանց վարքի մոդելները քննածին տարրերությունների վերաբերյալ տարածված տեսակետը:

Մարդաբանները, քաղաքագետները, սոցիոլոգները, լեզվաբանները քննել են լեզվի ու մշակույթի փոխհարաբերությունների տարրեր կողմեր, սակայն ԱՀ տեսության իրական ուրվագծերը երևացին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի հաղորդակցաբանության (կոմունիկատիվստիլկա) մեջ: ԱՀ հիմնախնդիրը առաջին անգամ ամբողջ սրությամբ ծառացավ պատերազմի ժամանակ, երբ տարրեր երկրների ներկայացուցիչներ ստիպված էին համատեղ լուծել համաշխարհային նշանակության հիմնախնդիրները: Ամերիկացիները, որոնք մինչ այդ մեկուսացած քաղաքականություն էին վարում, հայտնվեցին միջմշակութային շփումներ սկսելու անհրաժեշտության առջև: Հենց այդ ժամանակ ԱՄՆ-ում առաջին

անգամ պետական մակարդակով հրավիրվեցին լեզվաբաններ, մարդաբաններ, հաղորդակցության ոլորտի մասնագետներ, այդ թվում Մարգարետ Սիլը, Ռութ Բենեդիկտը, Ջեֆրի Գորերը, Ռինարոն Լա Բարը և ուրիշներ, որպեսզի բացատրություն տային իրենց դաշնակիցների (Ռուսաստանի ու Չինաստանի) և քչնամիների (Գերմանիայի ու Շապոնիայի) միջմշակութային տարրերություններին ու «տարօրինակ» վարքին /Seelye, 1993: 25/: 1948 թ. հունվարի 7-ին ԱՄՆ-ում ստորագրվեց այսպես կոչված Սմիթ-Սունդիի օրենքը տեղեկատվության ու մշակույթի փոխանակության մասին, որով ամերիկյան կառավարությունը պարտավորություն էր ստանձնում միջոցներ ձեռնարկել նպաստելու ամերիկացիների ու այլ երկրների ժողովուրդների միջև առավելագույնս լավ փոխընդունան հաստատմանը:

ՄՀ-ի՝ որպես ուսումնասիրության առանձին ոլորտ առանձնացնելու պատճառներից մեկը «խոսքի» ու «հաղորդակցության» գիտական հասկացությունների սահմանազատումն էր: ՄՀ-ի հիմնադիր է համարվում մարդաբան Էդվարդ Թ.Հոլը, որն իրեն դասում է Է.Սեպիրի հետևորդների թվին: Կարևոր ուժինից դարձավ Հոլի 1959թ. լույս ընծայած “*Silent Language*” /Hall, 1959/ գիրքը, որտեղ առաջին անգամ մանրամասնորեն վերլուծվեց հաղորդակցության ու մշակույթի փոխարարքությունը, իսկ ավելի ուշ նույն երկրորդ՝ “*The Hidden Dimension*” /Hall, 1966/ գիրքը նվիրվեց ժամանակի ու տարածության ըմբռնմանը տարբեր մշակույթներում, ինչպես նաև միջմշակութային վերլուծության կարևորության հիմնավորմանը: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հ. ՈՒ. Օլփորթի աշխատությունները, որոնք վերլուծում են նախապահարմունքների հիմնախնդիրները /Allport, 1954/, ինչպես նաև Ֆ. Ո. Քլակինի ու Ֆ. Լ. Ստրոնդերի ուսումնասիրությունները մշակութային արժեքների մասին /Kluckhohn, Strodtbeck, 1961/:

1960-ականների կեսերին ՄՀ-ի հիմնախնդիրները սկսեցին մանրամասնորեն ուսումնասիրվել ԱՄՆ Պիթսբուրգի համալսարանում: Քաղաքագետ Մ.Ռ. Սինգերը գրեց “*Culture: A Perceptual Approach*” /Singer, 1980/ աշխատությունը, որը հիմնված էր Սեպիր-Ուորֆի վարկածի վրա, սակայն «լեզվաբանություն» և «լեզվաբանական համակարգեր» եզրույթները փոխարինեց «ըմբռնում» (պերցեպցիա) և «ըմբռնողական համակարգեր» եզրույթներով՝ դիտարկելով դրանք որպես միջնորդներ (arbiters) մշակույթի ու նտածողության միջև: Լեզուն, պնդում էր Սինգերը, լոկ որոշակի մշակութային խմբի անդամների շրջանում համանման ընկալման հաստատումն ապահովելու միջոցներից մեկն է: Սինգերի աշխատությունը ներառվեց ՄՀ-ի հիմնախնդիրներին նվիրված “*Readings on Intercultural Communication*” մատենաշարի առաջին թողարկման մեջ՝ Դ.Հոոփսի (Hoopes) խմբագրությամբ:

Քլակին-Ստրոնդերի արժեքային-կողմնորոշումային մոդելի մշակումը շարունակեց Է. Ստյուարտը: Նրա գիրքը՝ “*American Cultural Patterns: A cross-Cultural Perspective*”, լույս տեսավ 1971թ. /Stewart, 1971/: Ստյուարտի տեսական դրույթները վերաբերում էին մշակույթների փոխգործակցությանը և կրկին ծառայեցին գուտ գործնական նպատակների. դրանք դարձան արտասահման

աշխատելու ուղարկվող ԱՄՆ զինվորական-տեխնիկական անձնակազմի բարդ գլանային ուսուցման համակարգի հիմքը: Այդ նույն ժամանակ Իլինոյսի համալսարանի հոգեբանների մի խումբ՝ Գ. Տրիանդիսի ղեկավարությամբ, զբաղված էր ինքնապատրաստման տեխնիկայի մշակմամբ, որը անվանվում էր «culture assimilator»: Արդյունքում Տրիանդիսն ու իր գործընկերները գրեցին *“The Analysis of Subjective Culture”* գիրքը՝ նվիրված մշակույթների բնույթի համադրական վերլուծությանը /Triandis, 1973/:

ՄՀ-ի գաղափարները աստիճանաբար ավելի մեծ հետաքրքրություն առաջացրեցին կրթության բնագավառում: Որքան ուժեղ էր զգացվում մայրենի լեզվի ու մշակույթի ազդեցությունը գիտելիքների յուրացման գործընթացի վրա, այնքան «պարզ էր դառնում, որ հաղորդակցության մշակութային պարամետրերի ու մարդկային փոխհարաբերությունների գործընթացի, ինչպես նաև ճանաչողության տարրերությունների ըմբռնումը վճռորոշ նշանակություն ունեն իրավես պլյուրալիստական հասարակությանը քարեհաջող անցման համար» /Hoopes, 1980: 12/: Հանուն քաղաքացիական իրավունքների շարժումը ամբողջ սրուրյամբ առաջադրեց էքսիկության, միջերենիկական ու միջազգային հարաբերությունների հարցերը: Գլեյզերն ու Մոյնիհանը (Glazer and Moynihan) հրատարակեցին *“Beyond the Melting Pot”* գիրքը, Քլարկը (Clark) զրադշում էր սև գետուոյի հոգեբանությամբ, Ռամիրեսն ու Կաստանեդան (Ramirez and Castaneda) ուսումնասիրում էին մշակութային ժողովրդավարության ու կենսակողնիտիվ (կենսաճանաչողական) զարգացման հիմնախնդիրները: Ուսումնասիրությունների մարդակենտրոն ուղղվածությունն անկասկած դրական միտում էր: Ինչպես նշում է Ս. Լ. Մակարովը. «հաղորդակցարանական լեզվագիտության զարգացումը նշանակում էր լեզվի մասին գիտության կողմից ճգնաժամի հաղթահարում և ինքնին մարդու վերադարձ դեպի հիմնախնդիրների իր շրջանակը. այժմ լեզվաբանը գործ ունի ոչ թե առարկայացած վերացական կառուցվածի, ոչ թե ինչ-որ կողմնակի գործունեություն սպասարկող գործիքի հետ, այլ անմիջականորեն մարդու հաղորդակցային գործունեության հետ, որը օժտված է նույնպիսի գիտակցությամբ, ինչպիսին հետազոտողը» /Մակարով, 1998: 15/:

ՄՀ-ի ոլորտում հետազոտությունների երկու հիմնական ուղղությունները, որոնք զարգացան ԱՄՆ-ում, *ինտերնացիոնալ միջմշակութային հաղորդակցությունը և ներքին միջերենիկական հաղորդակցությունն են*: Առաջին ուղղությունը եռանդուն կերպով զարգանում էր ուսումնական այս հաստատություններում, որտեղ կադրեր էին պատրաստվում արտերկրում աշխատելու նպատակով, երկրորդը՝ դպրոցներում, որոնցում սովորում էին խառը ազգային պատկանելության երեխաներ և առողջապահության ու սոցիալական աշխատանքի ոլորտներում: Դ.Հուպսը ենթադրում է, որ այդ ուղղությունների սահմանազատումն ու շատութեալ ևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ «ինտերնացիոնալիստները» հիմնականում ամերիկական հասարակության առաջատար սոցիալ-էթնիկական խումբն էին (*mainstream American culture*), մինչդեռ երկրորդ ուղղությունը գոյացել էր էքսիկ փոքրամասնությունների

խնդիրներից ու մշակութային բազմազանության գաղափարից: Ըստ այդմ բուն ՄՀ-ի ոլորտում առաջ է եկել յուրատեսակ միջմշակութային բաժանում, որով որոշ չափով բացատրվում են երկու ուղղությունների միջև առկա կոնֆլիկտն ու անհամապատասխանությունը /Hoopes, 1980/: Կարծիք կա, որ այդ բաժանումը, որը մինչ այժմ էլ դրսնորվում է այն բանում, թե ինչպես են կառուցվում ուսումնասիրությունները ՄՀ-ի ամերիկյան տեսության մեջ, բավականին արհեստական է ու ոչ լիովին հիմնավորված: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառը ամերիկյան հետազոտողների ավանդաբար գործնական վերաբերմունքն է հետազոտվող հիմնախնդիրների նկատմամբ: Եթե երկու ուղղությունների ներկայացուցիչները միավորեն իրենց ջանքերը, կարող էր ստացվել ՄՀ-ի միասնական տեսություն, որը կներառեր երկու գիտական ուղղությունների նվաճումներն էլ:

Վերլուծելով ամերիկյան հաղորդակցարանության մեջ մշակույթի դիտարկման տարբեր հայեցակերպերը՝ Ու.Ք. Հարտը գորում է հետազոտության երեք հիմնական մակարդակների մասին՝ *մոնոմշակութային, կրոսմշակութային* ու *իմստերմշակութային*: Մոնոմշակույթի ուսումնասիրումը բնութագրական է մարդաբանության ու սոցիոլոգիայի ոլորտների հետազոտություններին: Կրոսմշակութային ուսումնասիրությունները ենթադրում են երկու և ավելի մշակույթների համադրումը, ինտերմշակութայինը՝ երկու և ավելի մշակույթների փոխզործակցության վերլուծությունը (բնույթը և հետևանքները): Միջմշակութային համագործակցությունը, նրա կարծիքով, կարող է և պետք է ուսումնասիրվի տարբեր գիտակարգերի դիրքերից, դրանցից ոչ մեկը չունի առանձնաշնորհյալ իրավունք այդ ուսումնասիրությունների նկատմամբ /Hart, 1998/:

Ներկայումս հաղորդակցության ամերիկյան տեսության մեջ շրջանառվում է ՄՀ-ի նկատմամբ երեք հիմնական մոտեցում, որոնք են.

1. հասարակագիտական կամ գործառնական
2. մեկնողական-բացատրական
3. քննադատական

Այդ մոտեցումները հիմնված են տարբեր հիմնարար նախադրյալների վրա, որոնք վերաբերում են մարդկային կերտվածքին, վարքին ու կողմիցիային և տարբերվում են մշակույթի ու հաղորդակցության հայեցակարգայնացմամբ, ինչպես նաև հետազոտության կիրառվող մեթոդներով:

Հասարակագիտական մոտեցման նպատակը, որը հիմնված է հոգեբանական տվյալների վրա, հաղորդակցվողների վարքի նկարագրումն ու կանխատեսումն է: Այդ մոտեցման կողմնակիցները ենթադրում են, որ մարդու վարքը կանխատեսվի է, իսկ հաղորդակցությունն իրականացվում է մշակույթի ազդեցությամբ: Հետազոտության առաջնային մեթոդ է համարվում դիտարկումը: Այս դիրքերից կատարվող հետազոտությունները ճանաչում ու բացահայտում են հաղորդակցության շատ հայեցակերպերի մշակութային տարբերությունները, սակայն հաշվի չեն առնում համատեքստի ազդեցությունը:

Սեկնդական մոտեցումը, որը հենվում է մարդաբանության ու սոցիոլեզվաբանության ոլորտներում կատարվող ուսումնասիրությունների վրա, նույնապես նկարագրական է. դրա ելակետն այն է, որ մշակույթը ստեղծվում ու պահպանվում է մարդկային գործունեության շնորհիվ և շեշտվում է հաղորդակցության հետազոտման անհրաժեշտությունը համատեքստի հաշվառումով:

Քննադատական մոտեցումը, որը հիմնված է մշակույթի՝ որպես իշխանության համար պայքարի ոլորտի ընկալման վրա, նկատի է առնում տնտեսական ու քաղաքական այն ուժերը, որոնք ներազդում են մշակույթի ու հաղորդակցության վրա: Այդ մոտեցման կողմնակիցները, որոնք համոզված են, որ փոփոքրծակցության բոլոր ձևերը որոշվում են իշխանությանը պատկանելությամբ, որպես ապացույց օգտագործում են տարրեր գիտությունների տվյալներ և հետազոտության առաջնային մերոդ են համարում տերստային վերլուծությունը /Martin, 1999: 31/:

Ի. Կյուկանովը /Klyukanov, 1999/ ՄՀ-ի շրջանակներում առանձնացնում է «քազմանշակութականության» (*multiculturalism*) երկու մոտեցում: Առաջինը հիմնվում է պողիտիվիզմի ավանդույթների վրա: Պողիտիվիստական մոտեցման (որը կոչվում է նաև վերլուծական, ռեդուկցիոնիստական, մեխանիստական, գծային և այլն) գլխավոր նպատակը որոշակի մշակութային արձագանքների, մշակութային վարքի երևույթների ու տեսակների կանխատեսման ու վերահսկման ունակությունն է: Կյուկանովի կարծիքով, այդ թեմայով բոլոր աշխատությունները բննում են մշակութային արժեքները, կանոններն ու նորմերը, խոսքային ու ոչ խոսքային վարքը, մշակութային ցնցումը, ինտերմշակութային փոխակերպումները և այլն /Brislin, 1981; Kohls, 1981; Locke, 1992 և այլք): Հենց այդ մոտեցմամբ է իրականացվում այսօր ՄՀ-ի դասավանդումը ԱՄՆ-ում:

Ի. Կյուկանովի նկարագրած երկրորդ մոտեցումը ի հայտ եկավ 1960-ականներին՝ որպես հակալշիո պողիտիվիստականին: Դա համակարգային մոտեցում է, որը հիմնված է ընդհանուր համակարգերի տեսության (*General Systems Theory*) մեջ մարդու վարքի բնույթի դիտարկման Հոլի սկզբունքների վրա և անհատական համակարգի ու նրա շրջապատի միջև տեղեկատվության մշտական փոխանակման գաղափարի վրա: Ընդ որում, մշակույթն ընկալվում է ոչ թե որպես քաղաքացարերի հավաքածու, այլ որպես մեկ ամբողջություն կազմող այլ մշակույթների հետ ինտերակտիվ հաղորդակցության գործընթաց: Համակարգային մոտեցման համար առանցքային են միջնշակութային փոխակերպման տեսությունը, որը մշակել են Կիմն ու Ռուբենը /Kim and Ruben, 1988/ և Քինքեյի կոնվերգենցիայի (գուգամետության) տեսությունը /Kincaid, 1983/: Ներկայումս, ինչպես կարծում է Ի. Կյուկանովը, համակարգային մոտեցումը լայնորեն տարածվում է որպես «գլոբալ կրթություն» (*global education*): Սակայն, ըստ հեղինակի, այն ավելի հաճախ կիրառվում է խոսքում, քան գործնականում և հանգեցվում գլոբալ այնպիսի ոլորտների հավաքածուին, որոնցից են գիտությունն ու տեխնոլոգիան, միջազգային հարաբերությունները կամ էլ աշխարհի տարրեր երկրների ու տարա-

ծաշքանների ընդհանուր դիտարկումը: Աշխատությունները, որոնցում գործնականորեն կիրառվում են այդ հեռանկարային նոտեցումները, ավելի շուտ բացառություններ են: Որպես դրական օրինակներ Ի. Կյուկանովը նշում է Ե. Լապոյի գիրը՝ “The Choice: Evolution or Extinction? A Thinking Person’s Guide to Global Issues” /Laszlo, 1994/, ինչպես նաև նույն հեղինակի խմբագրությամբ լույս տեսած “The Relevance of General Systems Theory” /1996/, ժողովածուն, որտեղ ՄՀ-ի հիմնախնդիրները քննարկվում են իսկապես գիտական դիրքերից:

«Սիզմշակութային հաղորդակցություն» եզրույթը հայտնի չափով հարաբերակցվում է «մշակույթների երկխոսություն» հասկացության հետ: Այդ երևույթի առավել սպառիչ վերլուծությունը ներկայացված է Վ.Ս. Բիբերի աշխատություններում, ով «գրում է մշակույթի ապագա նոր համընդհանուր սոցիումի մասին, որն ինչ-որ առումով մոտ է պոլիսային սոցիալայնությանը և մարդկանց ազատ շփման առանձնահատուկ ձև է մշակույթի ուժային դաշտում, մշակութային երկխոսության մեջ» /Biber, 1999/:

Ներկայումս ՄՀ-ի տեսության մեջ նկատվում են հետաքրքրությունների նոր ոլորտներ. հաղորդակցություն մշակույթի գլոբալացման համատեքստում /Featherstone, 1990; Smith, 1990a; Smith, 1990b; Ferguson, 1992; McLuhan, Powers, 1993; Frederick, 1993; Stevenson, 1994; Crystal, 1997; Mowlana, 1997), մշակութային իմպերիալիզմ (Straubhaar, 1991; Tomlinson, 1991; Petras, 1993; Berlinger, 1999; Selene, Gokyigit, 1996; Brown, 1996; Herschlag, 1999; Kim, Seongcheol, 1998), զանգվածային միջմշակութային հաղորդակցության՝ ներառյալ Ինտերնետի, ինչպես նաև անմիջական ու միջնորդավորված շփման հիմնախնդիրները, այդ թվում Էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ /Avery, McCain, 1982; Cathcart, Gumpert, 1983; Shapard, 1990; Drummond, Hopper, 1991 և այլն):

Մեղիս-էկոլոգիան կամ հաղորդակցության միջոցների էկոլոգիան ուսումնասիրում է խորհրդանշանային համակարգերի ու տեխնոլոգիաների ազդեցությունը մարդկային հասարակության սոցիալական կազմակերպման, ճանաչողական գործընթացների, քաղաքական ու փիլիսոփայական գաղափարների վրա: Մեղիս-էկոլոգիայի հիմնական դրույթներն են. 1) իրականության հայեցակարգայնացման բնույթը մարդկային գիտակցության մեջ կախված է կենսաբանական ու տեխնիկական մի շարք գործոններից, ինչպես նաև կողային համակարգերից, որոնք օգտագործվում են տեղեկատվության սրամադրման համար, 2) տեղեկատվության կողավորման ու հաղորդման միջոցները չեզոք չեն, դրանք որոշակիորեն ազդում են մարդու՝ արտաքին աշխարհի ընկալման վրա, 3) քանի որ մարդկային մշակույթը անմիջականորեն կախված է հաղորդակցությունից, հաղորդակցային նողելում կատարվող փոփոխությունները գաղափարախոսական ու էպիստեմոլոգիական լուրջ հետևանքներ են բռնում մշակույթների էկոլոգիայի վրա, 4) չնայած հաղորդակցության նոր միջոցների ստեղծմանը, լեզուն նախկինի պես

առաջատար դիրք է գրավում մարդկային շփումներում, և հենց նրան պետք է վերապահվի առաջնայնությունը մեղիս-էկոլոգիայում /Postman, 2000/:

Մեղիս-էկոլոգիայի հիմնադիրը համարվում է կանադացի սոցիոլոգ ու մշակութաբան Մ. Մարլուիենը, որն առաջինը նկատեց մարդկային հասարակության վրա հաղորդակցության նոր միջոցների համապարփակ ազդեցությունը: Նրա կարծիքով, դրանք նշանավորում են պատմական դարաշրջանների հերթափոխը, դուրս են մղում արվեստի ու շփման նախկին տեսակները և օժտված են անցյալի փորձը նոր ձևերի մեջ հարմարեցնելու կարողությամբ: Մարլուիենը վերլուծում է մշակույթի տարասեռ առարկաների՝ լեզվի, փողի, ճանապարհների, մամուլի, գիտության, համակարգիչների, հեռուստատեսության և այլնի հաղորդակցային գործառույթները, որոնք դառնում են մարդկային զգայարանների տեխնոլոգիական շարունակությունը և արմատապես ազդում հասարակության կյանքի ոճի, արժեքային կողմնորչիչների, աշխարհընկալման (սենսորային հաշվեկշիռ) և սոցիալական կառուցվածքի վրա: Էլեկտրոնային ցանցերով խճողված աշխարհը վերածվում է «գլոբալ բնակավայրի», որտեղ ժամանակ ու տարածություն գոյություն չունի, իսկ յուրաքանչյուր անհատի կյանքն անցնում է «լույսի արագությամբ» /McLuhan, 1962; Beaulieu, 1999/:

Մեղիս-էկոլոգիայի հետ որոշ չափով աղերսվում է Էկոլեզվարանությունը կամ լեզվաէկոլոգիան, որը հիմնված է Ո. Միլլիկանի /Millikan, 1984/ նատուրալիստական էպիստեմոլոգիայի և Է. Ռիդի (Reed, 1996) էկոլոգիական հոգեբանության հետ Մ. Մ. Բախտինի և Լ. Ս. Վիգոսովսկու տեսության ինտեգրման վրա: Էկոլեզվարանության էությունը Երկիր մոլորակի վրա բազմազանության պահպանման կենսամշակութային մոտեցումն է՝ ներառյալ լեզվաբանական բազմազանությունը: Այդ գիտության ներկայացուցիչները անհանգստացած են այն բանից, որ աշխարհաբանական իրավիճակն աշխարհում հանգեցրել է լեզվաբանական ունակությունների հիերարխիկ բաշխմանը տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների միջև, լեզվաբանական էլիտաների կազմավորմանը, որոշ լեզուների՝ մյուսների նկատմամբ ունեցած կիրառման առավելություններին և լեզվաբանական խտրականությանը: Նրանք հանդես են գալիս հանուն մարդու լեզվական իրավունքների հարգման՝ անկախ քաղաքական, ժողովրդագրական ու տնտեսական կարգավիճակից: Ուստական գիտության մեջ առանձնանում են հետազոտության հետևյալ ոլորտները, որոնք հիմնված են լեզվի ու մշակույթի փոխկապվածության վրա և անվիճելի հետաքրքրություն են ներկայացնում միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից:

- Լեզվաերկրագիտություն /Верещагин, Костомаров, 1999; Томахин, 1996; Ошепкова, 1995/: Լեզվաերկրագիտական ուսումնասիրությունները գլխավորապես կիրառական բնույթի են և լեզվի ու մշակույթի փոխկապվածությունը արտացոլող տեղեկատվության արժեքավոր աղբյուր են:

- Էրնոլեզվարանություն (Герд, 1995; Толстой, 1997 և այլք). լեզվագիտության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզուն էքնոսի հետ հա-

բարերակցության դիրքերից և սերտորեն կապված է սոցիոլեզվաբանության հետ: Ն. Ի. Տոլստոյի պնդմամբ, էթնոլեզվաբանության համար «Էական է ոչ միայն և ոչ այնքան ժողովրդական մշակույթի, հոգեբանության ու դիցաբանական պատկերացումների արտացոլումը լեզվում, որքան լեզվի կառուցողական դերը և նրա ազդեցությունը ժողովրդական մշակույթի, ժողովրդական հոգեբանության ու ժողովրդական ստեղծագործության ձևավորման ու գործառնության վրա»: Նա ենթադրաբար առաջ է քաշում էթնոլեզվաբանության երկու սահմանում՝ 1) լեզվաբանության բաժին, որի առարկան լեզուն է ժողովրդի մշակույթի հետ հարաբերության մեջ, ուսումնասիրում է լեզվում մշակութային, ժողովրդական ու դիցաբանական պատկերացումների ու «ապրումների» հարաբերությունները, 2) «համալիր գիտակարգ», որի ուսումնասիրման առարկան մշակույթի, ժողովրդական հոգեբանության ու դիցաբանության «բովանդակային կողմն»՝ անկախ դրանց մարմանավորման միջոցներից ու ձևերից (խոսք, առարկա, ծես, պատկեր և այլն): Ն. Ի. Տոլստոյը կարծում է, որ այդպիսի հետազոտություն «կարելի է իրականացնել առավելապես կամ բացառապես լեզվաբանական մերորդնորով» /Տոլստոյ, 1997: 315/:

- Լեզվամշակութաբանություն /Տելիա, 1996; Յօրօնեա, 1997; Մասլովա, 1997 և այլք/: Վ. Ն. Թելիան լեզվամշակութաբանությունը բնորոշում է որպես էթնոլեզվաբանության մի մասը, որը նվիրված է լեզվի ու մշակույթի հարաբերակցության ուսումնասիրմանն ու նկարագրմանը դրանց ներդաշնակ համագործակցության մեջ /Տելիա, 1996: 217/: «Լեզվամշակութաբանության առարկան ուսումնասիրվում է երկու հիմնարար գիտությունների՝ լեզվագիտության ու մշակութաբանության «հսաշմերուկում» /նոյն տեղում: 222/:

Լեզվաբանության վերոնշյալ բոլոր ոլորտների նպատակը առանձին վերցրած մեկ լեզվամշակույթի ազգային-ինքնահատուկ առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Այդ տվյալներն անգնահատելի են միջմշակութային ուսումնասիրություններ կատարելիս, որոնք նախատեսված են երկու և ավելի լեզվամշակույթների համադրական վերլուծության համար: Ընդունողության մեխանիզմների ուսումնասիրումը /Յօրին, 1986; Զալևսկայա, 1996 և այլք/ բույլ է տալիս եզրակացություններ անել այն մասին, թե ինչպես է կատարվում հաղորդակցվող լեզվամշակույթների «հարաբերությունների հաստատում» և տեղեկատվության փոխանակումը միջմշակութային շփումների ընթացքում: Շատ մեծ է աշխարհի լեզվական պատկերի ազգային-ինքնահատուկ առանձնահատկությունների բնութագրման /Եսլիգինա, Շմելև 1997; Արյունովա 1999/, ինչպես նաև լեզվի ու ազգային ինքնագիտակցության հարաբերակցության նշանակությունը /Սիմոնեա, 1996; Գակ, 2000/:

Բ. Ս. Երաստվակը առանձնացնում է ՄՀ-ի հիմնախնդրի դիտարկման երկու հիմնական գիտական լուսեցում՝ գործիքային և ընթոնողական: Առաջինը նպատակառուղղված է գործնական արդյունքի ձեռքբերմանը (անհատների բարեհաջող հարմարմանը օտար միջավայրում և որոշակի համատեքստում արդյունավետ միջմշակութային շփման ուսուցման մեթոդիկայի ստեղծմանը),

Երկրորդը հնարավորություն է ընձեռում քննել մշակույթի ու անձի մեջ կատարվող փոփոխությունները, որոնք տեղի են ունենում «օտարի» հետ հանդիպման արդյունքում, ՄՀ-ի նկատմամբ մարդկային ընդունակության զարգացման հեռանկարները, մշակույթների միջև միջնորդի դեր կատարող անձի ձևավորումը: Այդ մոտեցման հիմքը ինքնատիպությունը պահպանելու անհրաժեշտության և միևնույն ժամանակ մշակույթների փոխգործակցության զաղափարն է: ՄՀ-ի շարժմանը դիտարկումն այս տեսանկյունից նախատեսում է շփման որակի անդադար զարգացում ու կատարելագործում, տարբերությունների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում՝ տարբեր ոլորտներում ու տարբեր մակարդակներում մշակույթների փոխըմբռնման աստիճանի աճի նպատակով /Երասօն, 1997: 443-444/: ՄՀ-ի հիմնախնդիրների դիտարկման հենց այս մոտեցումն է, թերևս, ամենահեռանկարայինը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнова Н. Д. Язык и мир человека. М.: Языки русской культуры, 1999.
2. Богин Г. И. Типология понимания текста: Учебное пособие КГУ. Калинин, 1986.
3. Булыгина Т. В., Шмелев А. Д. Языковая концептуализация мира (на материале русской грамматики). М.: Языки русской культуры, 1997.
4. Верещагин Е. М., Костомаров В. Г. В поисках новых путей развития лингвострановедения: концепция речеповеденческих тактик. М.: Ин-т рус. яз. им. А. С. Пушкина, 1999.
5. Воробьев В. В. Лингвокультурология (теория и методы): Монография. М.: Изд-во РУДН, 1997.
6. Гак В. Г. Человек в языке // *Логический анализ языка. Образ человека в культуре и языке*. М., 1999.
7. Гумбольдт В. Язык и философия культуры / Общ. ред. А. В. Гулыги и Г. В. Рамишвили. М.: Прогресс, 1985. /
8. Ерасов Б. С. Социальная культурология. М.: Аспект Пресс, 1997.
9. Залевская А. А. Вопросы теории овладения вторым языком в психолингвистическом аспекте. Тверь: Тверской государственный университет, 1996.
10. Макаров М. Л. Интерпретативный анализ дискурса в малой группе. Тверь: Тверской государственный университет, 1998.
11. Маслова В. А. Введение в лингвокультурологию. М.: Наследие, 1997.
12. Ощепкова В. В. Культурологические, этнографические и типологические аспекты лингвострановедения. Автореф. дисс. ... докт. филол. наук. М., 1995.

13. Теляя В. Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. М.: Школа “Языки русской культуры”, 1996.
14. Толстой Н. И. Этнолингвистика в кругу гуманитарных дисциплин // *Русская словесность: Антология*. М.: Academia, 1997.
15. Томахин Г. Д. Лингвострановедение: что это такое? // *Иностранные языки в школе*, 1996, № 6.
16. Allport G.W. *The Nature of Prejudice*. New York: Macmillan/Reading. MA: Addison-Wesley, 1954.
17. Avery R., McCain T. *Interpersonal and Mediated Encounters: A Reorientation to the Mass Communication Process* // G.Gumpert and R.Cathcart (eds.) *Inter/media: Interpersonal communication in a media world*. New York: Oxford University Press, 1982.
18. Beaulieu M. Who was Marshall McLuhan? // URL: <http://hosted/beaulieu/McLuhan/default.htm> (Retrieved March 11, 1999)
19. Berlingeri I. More Cultural Imperialism on the Net // URL: <http://roscoe.law.harvard.edu/HyperNews/get/courses/techseminar96-18/4/3.html> (Retrieved February 27, 1999)
20. Beyond the Melting Pot by Nathan Glazer, Daniel P. Moynihan // The MIT Press; second edition, June 15, 1970.
21. Biber D. A Textual Comparison of British and American Writing // *American Speech* 62, 1987.
22. Brislin R.W. Cross-Cultural Encounters: Face-to-Face Interaction. New York: Pergamon, 1981.
23. Brown C. Cultural Imperialism? No! // URL: [http://www.harvnet.harvard.edu/HyperNews/get/discussion/cult\\_imp2/2.html](http://www.harvnet.harvard.edu/HyperNews/get/discussion/cult_imp2/2.html) (Retrieved February 27, 1999)
24. Cathcart R., Gumpert G. Mediated Interpersonal Communication: Toward a New Typology // *Quarterly Journal of Speech*, 69 (3), 1983.
25. Crystal D. English as a Global Language. Cambridge [England]; N.Y.: Cambridge University Press, 1997.
26. Drummond K., Hopper R. Misunderstanding and its Remedies: Telephone Miscommunication // *“Miscommunication” and Problematic Talk* / N. Coupland, H.Giles and J.M. Wiemann (eds.). Newbury Park, CA: Sage, 1991.
27. Featherstone M. Global Culture: an Introduction // *Theory, Culture & Society*, 7 (2–3). 1990.
28. Ferguson M. The Mythology about Globalization // *European Journal of Communication*, 7, 1992.
29. Frederick H. H. Global Communication and International Relations. Belmont, CA: Wadsworth, 1993.

30. Hymes D. Models of the Interaction of Language and Social Life // *Directions in Sociolinguistics: the Ethnography of Communication*. NY: Holt, Rinehart, and Winston, 1972.
31. Hall E. The Silent Language. Garden City. N. Y.; Doubleday, 1959.
32. Hall E. The Hidden Dimension. Garden City. N. Y.: Doubleday, 1966.
33. Hart W.B. Intercultural Computer-Mediated Communication (ICCMC) // *The Edge: The E-Journal of Intercultural Relations*, 1998. Vol. 1, 4, HART-LI.COMmunications // URL: <http://www.hart-li.com/biz/theedge/> (Retrieved February 21, 1999)
34. Herschlag M. Cultural Imperialism on the Net // URL:<http://www.harvnet.harvard.edu/vpr/tues.empire.html>. (Retrieved February 20, 1999)
35. Hoopes D.S. Intercultural Communication Concepts and the Psychology of Intercultural Experience // *Multicultural Education: A Cross Cultural Training Approach* / Margaret D. Pusch (ed.) U.S.: Intercultural Press, Inc., 1980.
36. Kim S. Cultural Imperialism on the Internet // *The Edge: The E-Journal of Intercultural Relations*, 1998, Vol. 1, 4, HART-LI.COMmunications // URL: <http://www.hart-li.com/biz/theedge/> (Retrieved February 21, 1999)
37. Kim Y.Y., Ruben B.D. Intercultural Transformation: A Systems Theory // *Theories in Intercultural Communication* / Y.Y. Kim, W.B. Gudykunst (eds.) Beverly Hills, CA: Sage Publications, 1988.
38. Kincaid D. L. Recent developments in the methods for communication research // *Journal of East and West Studies*, 14 (1), 1985.
39. Kluckhohn F. R., Strodtbeck F. L. Variation in Value Orientation. N. Y.: Row, Peterson. 1961.
40. Klyukanoy I.E. A Systems Approach to Multicultural Education // *The Edge: The E-Journal of Intercultural Relations*, Vol. 1, 2, HART-LI.COMmunications // URL: <http://www.hart-li.com/biz/theedge> (Retrieved February 27, 1999)
41. Kohls L.R. Developing Intercultural Awareness. Washington D.C.: Society for Intercultural Education, Training, and Research, 1981.
42. Laszlo E. The Choice: Evolution or Extinction? A thinking person's guide to global issues. New York: Putnam, 1994.
43. Locke D.C. Increasing Multicultural Understanding: A Comprehensive Model. Newbury Park, CA: Sage Publications, 1992.
44. Martin J.N., Nakayama T.K. Intercultural Communication in Contexts, 2nd ed. Mountain View, California: Mayfield Publishing Company, 1999.
45. Mead M. Coming of Age in Samoa. William Morrow, 1928.
46. Mead M. The Application of Anthropological Techniques to Cross-National Communication // Booth W. C., Gregory M. W. The Harper and Row Reader. N. Y., 1988.
47. Mead M. Male and Female. Harper Collins, 2001.

48. McLuhan M., Powers B. *The Global Village: Transformations in World Life and Media in the 21st Century*. New York: Oxford University Press, 1993.
49. Millikan R. *Language, Thought, and Other Biological Categories: New Foundations for Realism*. Cambridge, MA: MIT Press, 1984.
50. Mowlana H. *Global Information and World Communication*. New York: Longman, 1997.
51. Petras J. Cultural Imperialism in the Late 20th Century // *Journal of Contemporary Asia*, 1993, 23(2).
52. Postman N. The Humanism of Media Ecology // Paper presented at the *First Annual Convention of the Media Ecology Association*. June 16, New York, NY: Fordham University, 2000.
53. Reed E. *Encountering the World: Toward an Ecological Psychology*. Oxford: Oxford University Press, 1996.
54. Seelye H.N. *Teaching Culture: Strategies for Intercultural Communication*. Lincolnwood, Illinois USA: National Textbook Company, 1993.
55. Shapard J. Observations on Cross-Cultural Electronic Networking // *Whole Earth Review*, No. 69 (Winter), 1990.
56. Singer M.R. Culture: A Perceptual Approach // *Intercultural Communication: A Reader* / (eds.) Samovar, Larry A. and Porter, Richard E. Belmont, Calif.: Wadsworth Publishing Company, 1980.
57. Smith A.D. Media Globalism in the Age of Consumer Sovereignty // *Gannett Center Journal*, 4(4), 1990.
58. Smith A.D. Towards a Global Culture? // *Theory, Culture & Society*, 1990.
59. Stevenson R. L. *Global Communication in the Twenty-First Century*. New York: Longman, 1994.
60. Stewart E. C. *American Cultural Patterns: A Cross-Cultural Perspective*. Washington, D. C.: Society for Intercultural Education, Training and Research, 1971.
61. Straubhaar J. D. Beyond Media Imperialism: Asymmetrical Interdependence and Cultural Proximity // *Critical Studies in Mass Communications*, 1991.
62. Tomlinson J. *Cultural Imperialism: A Critical Introduction*. London: Pinter Publishers, 1991.
63. Triandis H., Vassiliou V., Vassiliou G., Tanaka Y., Shanmugam A. V. The Analysis of Subjective Culture // *Political Science Quarterly*, Vol. 88, No. 4., Dec., 1973.

**Н. АРУТЮНЯН – Краткий обзор истории становления теории межкультурной коммуникации.** – Данная статья посвящена истории становления относительно молодой науки – теории межкультурной коммуникации. В ней выделяются работы, посвященные проблемам межкультурной комму-

никиации, рассматриваются основные направления исследований в данной области, принципы лингвистического детерминизма и релятивизма, основные уровни исследований культуры в американской коммуникативистике и т.д. Статья знакомит читателя с такими новыми “смелными” областями теории межкультурной коммуникации, как *культурный империализм, глобализация культуры, медиа-экология*.

**Ключевые слова:** межкультурная коммуникация, монокультурная, кросскультурная, диалог культур, мультикультурализм, медиа-экология, лингвокультурология

**N. HARUTYUNYAN – A Brief Review of the Development of Intercultural Communication Theory.** – The paper presents a brief history of formation of the theory of intercultural communication – a relatively young branch of science. Special attention is paid to the major issues of intercultural communication and basic directions of research in this field, to the principles of linguistic determinism and relativism, to the main levels of analysis of culture in the American Communication Studies, etc. The author brings to light such new areas of the theory of intercultural communication as *cultural imperialism, globalization of culture, media ecology*.

**Key words:** intercultural communication, mono-cultural, cross-cultural, multiculturalism, dialogue of cultures, media ecology, linguocultural studies